ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Ширакский центр арменоведческих исследований НАН РА
Shirak Centre of Armenological Studies NAS RA

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ НАУЧНЫЕ ТРУДЫ SCIENTIFIC WORKS

ՀԱՏՈՐ ВЫПУСК EDITION 28 2025 № 1

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ
BOOK REVIEW

ՀՏԴ՝ 398
DOI: 10.52971/18294316-2025.28.1-218

ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՄԵԾԱՐԺԵՔ ԺՈՂՈՎԱԾՈՒ

«Շիրակ. հայոց բանահյուսական մշակույթը», *կազմողներ՝ Մ. Հ. Խեմչյան (գիտական ղեկավար), Է. Հ. Խեմչյան, Լ. Խ. Ղռեջյան, Հ. Հ. Մատիկյան, Երևան, ՀԱԻ հրատ., 2024, 640 էջ +2 էջ նկար:*

Վերջերս հրատարակվել է Շիրակի բանահյուսական մշակույթը ներկայացնող ծավալուն ժողովածու, որին ընթերցող-հետազոտողները սպասել են տասնամյակներ շարունակ: Շիրակի բանահյուսությանը նվիրված առանձին ժողովածուներ մեզանում շատ չեն եղել: Անգնահատելի արժեք է էմինեան ազգագրական ժողովածուի առաջին հատորում Աղ. Մխիթարյանցի տպագրած «Փշրանք Շիրակի ամբարներից» աշխատանքը (Մոսկուա-Ալէքսանդրապոլ, 1901), որը Շիրակի բանահյուսության և ազգագրության ուսումնասիրման առաջին փորձն էր: Շիրակը, լինելով հայ բանահյուսական մշակույթը կրող ու ապրեցնող ազգագրական շրջան, մինչ այս ժողովածուի լույս աշխարհ գալը կարոտ էր իր ամբարներում պահվող բացառիկ արժեքների մեկտեղմանը, հանրայնացմանն ու հանրահռչակմանը: Այս ծավալուն գրքում ի մի են բերվել վերջին հարյուրամյակում Շիրակի տարբեր տարածաշրջաններից հավաքագրված և բանահյուսության գրեթե բոլոր ժանրերին պատկանող բացառիկ ու արժեքավոր նյութեր՝ օգտագործելով ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի և ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի արխիվներում պահվող անտիպ նյութերը, դաշտային բանահյուսական նյութերի արդի գրառումները:

Աշխատանքը տպագրվել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ և բ. գ. թ. Է. Խեմչյանի պատասխանատու խմբագրմամբ:

Ժողովածուն կազմված է առաջաբանից (15 էջ), որտեղ տրվում է Շիրակ աշխարհի պատմության ու աշխարհագրության համառոտ ուրվագիծը: Ըստ փուլերի ներկայացվում են Շիրակում 19-րդ դարավերջից մինչև 21-րդ դարսկիզբն ընկած ժամանակահատվածում իրականացված բանահավաքչության, հրատարակության և ուսումնասիրության գործընթացը ներկայացնող տեղեկություններ: **Առաջին փուլը** ներառում է հայ մտավորականների՝ Քաջբերունու (Գաբրիել Տեր-Հովհաննիսյան), Աղեքսանդր Ափրիկյանի, Աղեքսանդր Մխիթարյանցի, Արշակ Բրուտյանի, Հովհաննես Կոստանյանցի, Երվանդ Լալայանի և այլոց

արժեքավոր հավաքածուները, տարբեր հեղինակների կողմից հայ պարբերական մամուլում տպագրված բանահյուսական նյութերը, որոնք ամբողջացնում են 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի Շիրակի բանահյուսության ընդհանուր պատկերը:

Բանահյուսական նյութի հավաքման ու տպագրման գործընթացի **երկրորդ փուլը** համընկնում է Հայաստանի Խորհրդային շրջանին: Ժողովածուն կազմողներն այս շրջանը ներկայացնում են երկու ենթափուլերով՝ 1925-1960 թթ. և 1960-1990 թթ.: Առաջին ենթափուլն ընդգրկող ժամանակահատվում բանահավաքներ Գեղամ Թարվերդյանը, Մնացական Թամրազյանը, Նիկողոս Նիկողոսյանը և այլք առավել շատ ուշադրություն են դարձրել քնարական բանահյուսության նոր դրսևորումներին և գրառել մեծ ծավալի նյութ: Այս շրջանն առանձնանում է աշուղների գործունեությանը նվիրված աշխատանքների հրատարակմամբ, ինչի մասին ամփոփ ներկայացվում է ժողովածուի առաջաբանում:

Երկրորդ ենթափուլը ներկայացնում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանագիտական-բանահավաքչական արշավախումբը, որի մասնակիցներն էին Սարգիս Հարությունյանը, Արտաշես Նազինյանը, Արուսյակ Սահակյանը, Ժենյա Խաչատրյանը և Արազ Կարապետյանը: Մեծ արժեք են ներկայացնում Պարույր Բարսեղյանի գրառումները: Ժողովածուի պատասխանատու խմբագիր Է. Խեմչյանը, լինելով վերջիններիս ժամանակակիցն ու գործընկերը, ճշգրտորեն ներկայացնում է բանահավաքների կատարած հսկայածավալ աշխատանքի մանրամասները:

Երրորդ փուլն ընդգրկում է 1990-ականներից մինչև մեր օրերը, որը հիմնականում կապված է ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գործունեության հետ: Կենտրոնի «Գիտական աշխատություններում» բազմիցս հրատարակվել են Շիրակի բանահյուսական մշակույթը ներկայացնող, տեսական ու գործնական աշխատանքների արդյունքները ներկայացնող հետազոտություններ: «Շիրակ. Հայոց բանահյուսական մշակույթը» ժողովածուի հիմքն են կազմում ինչպես արխիվներում և առանձին հավաքածուներում պահվող, այնպես էլ կազմողների կողմից արված արդի գրառումները: Նրանք, քաջատեղյակ լինելով հայ բանագիտության պատմությանն ու գիտական հիմնարկներում պահվող բանահյուսական արխիվներին, ամենայն պատասխանատվությամբ կարողացել են ներկայացնել Շիրակի բանահյուսությունը՝ նյութի գրառումից մինչև ժողովածուների հրատարակություն:

Ժողովածուն բաղկացած է երեք բաժիններից՝ 1. Վիպական բանահյուսություն (349 էջ), 2. Քնարական բանահյուսություն (74 էջ), 3. Ասույթաբանություն (72 էջ):

Առաջին՝ «Վիպական բանահյուսություն» բաժնում զետեղված են հրաշապատում (31 միավոր), իրապատում (60 միավոր) և կենդանապատում (4 միավոր) հեքիաթներ, որոնք կլրացնեն հայ ժողովրդական հեքիաթների՝ մինչև այժմ հրատարակված հարուստ ժառանգությունը: Ծանոթագրություններում կազմողները տվել են հեքիաթների տեսակների միջազգային զուգահեռներն ըստ Հանս-Յորգ-Ութերի դասակարգման: Ժողովածուում ընդգրկված հեքիաթները տպագրվում են առաջին անգամ:

Բաժնում ընդգրկված են նաև առակներ (8 միավոր), «Ղարիբի հեքիաթը» սիրավեպի մեկ տարբերակ, ավանդություններ ու ավանդազրույցներ (11 միավոր), զրույցներ (40 միավոր), իրապատում զրույցներ (61 միավոր), զվարճախոսություններ (222 միա-

վոր), ստապատումներ (2 միավոր), գյումրեցի Ղազար Աղայի պատմությունները (9 միավոր) և մեկ հուշապատում:

Երկրորդ՝ «Քնարական բանահյուսություն» բաժինը ներառում է Շիրակի բազմաբնույթ երգերը, որոնց մեծ մասը կենցաղավարում են մինչ օրս: Շիրակի երգերը բաժանվում են երեք հիմնական խմբերի՝ պարերգեր, երգեր, խաղեր, որոնցից յուրաքանչյուրն ունի ներքին ստորաբաժանումներ: Ժողովածուի այս բաժինը Շիրակի երգերի հարուստ շտեմարան է, որն ընդգրկում է ժողովրդական խաղիկներ (468 միավոր), պարերգեր, ջանգյուլումներ և վիճակի երգեր (ընդհանուր՝ 265 միավոր), վիպական, աշխատանքային, հարսանեկան, զավեշտական, աշուղական երգեր, սգերգեր, օրորոցայիններ և զանազան այլ երգեր (ընդհանուր՝ 140 միավոր):

Երրորդ՝ «Ասույթաբանություն» բաժնում ներկայացվում են խոսքաշեն շիրակցիների արխաիկ մտածելակերպն արտահայտող բանաձևային բանահյուսության տարբեր ժանրերը ներկայացնող բացառիկ նյութեր՝ առած-ասացվածքներ (1281 միավոր), դարձվածքներ (775 միավոր), օհնանք-բարեմաղթանքներ (255 միավոր), երդումներ (115 միավոր), անեծքներ (423 միավոր), սպառնալիքներ (94 միավոր), հանդիմանական ու ծաղրական խոսքեր (45 միավոր), փաղաքշական ասույթներ (60 միավոր), ասելուկներ և շուտասելուկներ (37 միավոր), հանելուկներ (166 մկիավոր) և աղոթքներ (8 միավոր): Նյութերը դրված են այբբենական կարգով և ունեն համարակալումներ, ինչը խոսում է կազմողների գիտական լուրջ մոտեցման ու ժողովածուների կազմման հարուստ փորձի մասին:

Հավատարիմ մնալով ժողովածու կազմելու ակադեմիական չափանիշներին՝ նրա հեղինակները այն հագեցրել են հանգամանալից ծանոթագրություններով, Շիրակի բարբառի հարուստ բառարանով (շուրջ 2500 բառ), բանասացների, անձնանունների, տեղանունների և օգտագործված գրականության ցանկերով:

«Շիրակ. Հայոց բանահյուսական մշակույթը» ժողովածուն կազմված է գիտական հրատարակություններում մինչ այժմ կիրառված տեքստաբանական կանոններով՝ հավատարիմ մնալով բնագրին ու բարբառին:

Հետազոտողների սեղանին դրված այս ժողովածուն նոր ու կարևոր խոսք է հայ բանագիտությամբ, ազգագրությամբ և, ընդհանրապես, հայագիտությամբ զբաղվողների և հետաքրքրվողների համար:

Հասմիկ ԳԱԼՍՏՅԱՆ, բան.գիտ.թեկնածու
ՀՀ ԳԱԱ ՀԱԻ և ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ գիտաշխատող